

Հ Ա Յ Ա Ս Տ Ա Ն

Հայաստանի անկախացումէն ի վեր շարք մը նուիրատուներ եւ գլխաւոր բարերարներ իրենց հաստատած հիմնադրամներով կ'օժանդակեն Հ.Բ.Ը. Միութեան կրթական, մշակութային, մարդասիրական, եւ հոգեւոր դաստիարակութեան ծրագիրներուն: Անցնող տասը տարիներու ընթացքին, ամէն տարիքի եւ տարբեր եկամտոյի տէր հայեր օգտուած են եւ կ'օգտուին հաստատուած ծրագիրներէն եւ տարեկան աւելի քան 1000 հոգի աշխատանք ունենալու հնարաւորութիւնը կը վայելեն:



■ Նորքի, Արաբկիրի եւ Մալաթիոյ Հայորդեաց Կեդրոն

Հ.Բ.Ը. Միութիւն եւ Ս. Էջմիածին 1993-էն սկսեալ կը գործակցին տնօրինելու համար երեք մանկական հաստատութիւններ: Գերխնդուած դպրոցներու մէջ՝ կըրճատուած ուսումնական պահերու բացը կը գոցեն այս հաստատութիւնները աշակերտներուն պատմութեան, կրօնքի, լեզուի, արուեստի, երաժշտութեան ձեռնային աշխատանքին եւ մարմնամարզութեան դասաւանդումներ կազմակերպելով ամէն օր, կէսօրէ ետք ժամը 2-էն մինչեւ երեկոյեան 7-ը: Այս երեք կեդրոններու մէջ, մատուցուած նիւթերուն կողքին առիթ կը ստեղծուի ամէն շաբաթ կրօնական դաստիարակութեան, ժամերգութեան ներկայ ըլլալու եւ Ս. Գրքի սերտողութեան պահեր ունենալու: Երեք կեդրոնները միասնաբար ունին 5 տարեկանէն մինչեւ 16 տարեկան 3500 աշակերտներ, եւ 300 վարչական-ուսուցչական կազմ: Անցնող երկու տարուան ընթացքին իւրաքանչիւր կեդրոն նորոգութիւններու ենթարկուեցաւ: Հ.Բ.Ը. Միութեան երեք Ապուրի Խոհանոցներն ալ կը գտնուին Արաբկիր, Մալաթիա, եւ Նորքի շրջաններուն մէջ:



■ Հայաստանի Ամերիկեան Համալսարան

Երեւանի մէջ հաստատուած Հայաստանի Ամերիկեան Համալսարանը կը շարունակէ բարձր մակարդակի իւրայատուկ առիթներ ստեղծել Մագիստրոս աստիճանի բարձրագոյն ուսման կարելիութիւններ տալով աւելի քան 7 տարբեր ասպարեզներու մէջ (ինչպէս քաղաքագիտութիւն, իրաւաբանութիւն, ճարտարագիտութիւն, եւլն.): 2001-ին երկու նոր բաժին ալ աւելցաւ Համակարգիչի եւ Տեղեկատուութեան գիտութեան մարզերուն մէջ: Համալսարանը հպարտ է իր աւելի քան 850 շրջանաւարտներով, որոնցմէ շատեր արդէն յաջողած են իրենց ընտրած ասպարեզներուն մէջ: Այսօր, Համալսարանի Շրջանաւարտներուն համար, աշխատանքային նոր ու ընդարձակ կարելիութիւններ կը ստեղծուին շնորհիւ իրենց ձեռք բերած փորձառութեան, անգլերէն լեզուի հմտութեան, արեւմտեան պատրաստութեամբ զանազան մարզերէն ներս իրենց տրուած փորձառական-մասնագիտական կարելիութիւններուն:



■ Սբ. Ներսէս Հիւանդանոց

Հ.Բ.Ը. Միութիւնը 2001 թուականին գնեց 120 մահճակալանոց այն հիւանդանոցը, որ անցնող մի քանի տարիներու ընթացքին կը գործածուէր որպէս Միութեան հովանաւորած Գեղագիտական Վիրահատութեան կեդրոն: 2001-ի վերջաւորութեան Միութիւնը հիւանդանոցը յանձնեց Ս. Էջմիածնին, անոր մարդասիրական ծառայութիւններու առաքելութեան զարկ տալու նպատակաւ: Միութիւնը պիտի ֆինանսաւորէ շինարարական բաժինը Ս. Ներսէս Հիւանդանոց անունով մկրտուած այս կեդրոնին ուր զանազան գործողութիւններ կատարելու բաժանմունքներ պիտի հաստատուին (օր. ունեւարձական, ընդհանուր, վերականգնողական եւլն.):